ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը 2022 թ. նոյեմբերի 4-ին կազմակերպում է III միջազգային գիտաժողովը՝ «**Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» խորագրով: Այն նվիրված է Հալեպի «Քարեն Եփփէ» ազգային ճեմարանի հիմնադրման 75-ամյակին:**

Մասնակցել ցանկացողները մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը պետք է «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժին ներկայացնեն զեկուցման հիմնադրույթները 1 էջի սահմաններում՝ ներառյալ զեկուցման թեման, մասնակցի անունը և ազգանունը, ինչպես նաև այն հաստատությունը, որը ներկայացնում է զեկուցողը (անկախ հետազոտողները նույնպես կարող են մասնակցել): 10-օրյա ժամկետում հեղինակներին կտեղեկացվի իրենց թեմաների ընտրության վերաբերյալ:

Այն թեմաները, որոնք կազմկոմիտեի կողմից կարժանանան դրական կարծիքի, կներկայացվեն կայանալիք գիտաժողովին:

Նյութերը պետք է ուղարկել gayane-shaxkyan@mail.ru էլ. հասցեին:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներ են՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Զեկուցումների համար տրամադրվելու է 15 րոպե:

Գիտական նստաշրջանին զեկուցված նյութերը տպագրվելու են «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» վերտառությամբ հոդվածների հերթական ժողովածուում (պրակ 3)**:**

Կեցության և սննդի ծախսերը հոգում են մասնակիցները կամ գործուղող կազմակերպությունները: